ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.09.2022թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<ԱԼԼ Գրուպ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի և <<ԱԼԼ Գրուպ>> ՍՊԸ-ի միջև 07.04.2022 թվականին կնքված <<ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22-01/087>> ծածկագրով գնման պայմանագիրը՝ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելու մասին որոշումը:

Հայցադիմումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում մուտքագրվել է 13.09.2022 թվականին և կազմվել թիվ ԵԴ/47686/02/22 քաղաքացիական գործը:

Քաղաքացիական գործը դատավորի աշխատակազմին հանձնվել է 15.09.2022 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ից պետք է պահանջել <<ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22-01/087>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<ԱԼԼ Գրուպ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել <<ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22-01/087>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի է սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ս.ԵՐԻՑՅԱՆ